ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

N 131- Ա **28 հունիսի 2018 թ.**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՄԻ ՇԱՐՔ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի և 19-րդ հոդվածի դրույթներով

կարգադրում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2018 թվականի ապրիլի 10-ի «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունու Մ.Մելիք Շահումյանցի անվան N 1 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Խանում Գերմանի Ղազարյանին արձակուրդ տրամադրելու և տնօրենի լիազորությունների ու պարտականությունների իրականացումն Անժելա Պետրոսյանին վերապահելու մասին» N 80-Ա, ապրիլի 16-ի «Հրաչիկ Հովհաննեսի Ասատրյանի հետ 2016 թվականի նոյեմբերի 1-ին կնքված N 388 աշխատանքային պայմանագիրը լուծելու մասին» N 81-Ա, «Հրաչիկ Հովհաննեսի Ասատրյանին «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գանձակ գյուղի N 2 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնակատար նշանակելու և ժամանակավոր աշխատանքային պայմանագիր կնքելու մասին» N 82-Ա և «Արա Հայկազյանին արձակուրդ տրամադրելու մասին» N 83-Ա, ապրիլի 17-ի «Վարդ Հարությունի Ավետիսյանին «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Նորատուս գյուղի N 1 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնում նշանակելու և աշխատանքային պայմանագիր կնքելու մասին» N 84-Ա, ապրիլի 19-ի «Արտակ Ռաֆիկի Եդոյանին Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Գավառի պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի պարտականությունների կատարումից ազատելու և 2017 թվականի ապրիլի 14-ին կնքված N 202 աշխատանքային պայմանագիրը լուծելու մասին» N 85-Ա, «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Գավառի պոլիկլինիկա» պետական փակ բաժնետիրական ընկերության տնօրենի լիազորությունների և պարտականությունների կատարումը Պարույր Լևիկի Կուռոյանին վերապահելու մասին» N 86-Ա և «Հանձնաժողով ստեղծելու մասին» N 87-Ա, ապրիլի 25-ի «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Շատվան գյուղի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Ֆրունզիկ Ազատի Գևորգյանի նկատմամբ

կարգապահական տույժ կիրառելու մասին» N 88-Ա և «Աշխեն Խլոյանին չվճարովի արձակուրդ տրամադրելու մասին» N 89-Ա, ապրիլի 27-ի «Օֆիկ Չիչոյանին արձակուրդ տրամադրելու մասին» N 93-Ա, մայիսի 7-ի «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի համակարգի փակ բաժնետիրական ընկերություններում ֆինանսական աուդիտ անցկացնելու մասին» N 95-Ա, մայիսի 8-ի «Յուրա Մուշեղյանին արձակուրդ տրամադրելու մասին» N 96-Ա, «Ռաֆայել Լևիկի Սիմոնյանին «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վերին Գետաշենի N 2 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի լիազորությունների ու պարտականությունների կատարումից ազատելու մասին» N 97-Ա, «Միքայել Նուրադինի Սարգսյանին «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վերին Գետաշենի N 2 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնում նշանակելու և աշխատանքային պայմանագիր կնքելու մասին» N 98-Ա, «Հանձնաժողով ստեղծելու մասին» N 99-Ա և «Սերժիկ Գալստյանին արձակուրդ տրամադրելու մասին» N 100-Ա, մայիսի 14-ի «Սվետլանա Հրաչիկի Մաթևոսյանի հետ 2013 թվականի մայիսի 13-ին կնքված N 324 աշխատանքային պայմանագիրը լուծելու մասին» N 102-Ա և «Սվետլանա Հրաչիկի Մաթևոսյանին «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Սևանի N 4 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնակատար նշանակելու և ժամանակավոր աշխատանքային պայմանագիր կնքելու մասին» N 103-Ա, մայիսի 15-ի «Անուշ Արզաքանցյանի հետ կնքված աշխատանքային պայմանագրի գործողության ժամկետը երկարացնելու մասին» N 111-Ա, մայիսի 31-ի «Միհեր Հակոբի Կարապետյանին Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի օգնականի պաշտոնից ազատելու մասին» N 113-Ա, «Զորիապ Թադևոսի Եգանյանին Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի օգնականի պաշտոնից ազատելու մասին» N 114-Ա և «Արա Ֆիրդուսի Խլոյանին Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի խորհրդականի պաշտոնից ազատելու մասին» N 115-Ա կարգադրությունների մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝ կարգադրությունների նախաբանում «Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի» բառերը փոխարինել «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի ու 19-րդ հոդվածի» բառերով:

2. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ի. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ

ք. Գավառ